

Պոլսական վերջին արևնայեղ
 գեղարվեստի վրայ, ամեն գասա-
 կարգի հայերու հետ արասահ-
 ման նետուեցան նաև կարգ մը
 մտաւորական ընտիր ուժեր :

Եթէ այս ուժերուն Պոլսէ հե-
 աջումը ֆրաս մըն էր նոյն ու-
 տանին, միւս կողմէ, անոնց ներ-
 կայութիւնը որքա՞ն օգտակար
 կրնար լլլալ հեռաւոր հայ գաղ-
 թականութիւններուն, շատ աւելի
 կարօտ ընտիր ուժեր պարունա-
 կելու քան կեդրոնը :

Յաւալի է սակայն հաստատել
 թէ այն ուժերուն մէկ մասը,
 որ Պոլսոյ մէջ այնքան ընտիր
 համարում կը վայելէր իբրև ու-
 սուցիչ, օրէնսդէտ, գրող և կամ
 խմբագիր, աչտա երկրի մը մէջ
 փոխանակ ալ աւելի թուի առ-
 նելու, ընդհանուր «քլեցա»,
 կծկտեցա, գրեթէ ոչնչութեան
 մը վերածուեցա :

Ի հարկ է, այս գիրքը ուրիշ
 բանի չձառայի բայց եթէ ամէն
 օր յիշեցնել Պատկանեանի համ-
 բաւար «Թքել եմ»ը Արգարեւ,
 ինչը ընտու պէտք անոնց անհա-
 տական արժանիքը, հմտու-
 թիւնը, նոյն իսկ աղանդը, երբ
 այս անգին յատկութեանց հետ
 զուգընթաց չբարխէր աւելի
 կարեկից սիրտ մը գէպ ի աղ-
 փային տառապանքները :

Ինչէ՞ն է այս ծայրայեղ վե-
 րապահումը այս դասակարգին
 վրայ : Ինչո՞ւ համար, ուր ալ
 գտնուին Եւրոպայի մէջ կամ ով-
 կիանէն անդին, Սեւ Մովու ե-
 զերքը կամ Վիթոլքաի ստորտը,
 նոյն սառած նկարագիրը կը
 պարզեն, փոխանակ իրենց անու-
 բանալի կարողութիւնները աղ-
 գին ընծայելու, իբր թանաղին
 զէնքեր առաջդրութեան մա-
 քառումին մէջ :

Ստրկութեան բնազդը այսքան
 խոր արմատներ բռնելու է մեր
 մշակութամ մտքերու մէկ մասին
 մէջ, որ նոյն իսկ աչտա եր-
 կիրներու մէջ թրքական լրտե-
 սէն, բանտէն ու շղթայէն վար-
 հուրին ու շարչարտին անոր
 մղձաւանջով :

ՇԱԽՄԱՆ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ
 ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՉՈՐԵՔԵԱԲՈՒ ԵՒ ՇԱՔԱՔ ՕՐԵՐԸ

(ԳԻՆ 10 ՍԱՆԹԻՄ)

(ԳԻՆ 10 ՍԱՆԹԻՄ)

Отговорникъ: Н. Драгулевъ.

Նախկ եւ քաւ գրիկ
 Արագրուրեւն հասցիկն
 Редакция на вѣстникъ
 «Шаржумъ»
 Варна.
 Redaction du journal
 «Charjoum»
 Varna (Bulgarie)

Handwritten notes:
 Wechtharisfangame
 N. 4
 Nimm

ԸՍԵԼԻՔ ՍԸ ՉՈՒՆԻՔ

Անշուշտ անոնցմէ իւրաքան-
 չիւրը իր առջին ունէր մէյ մէկ
 ասպարէզ որ խորտակուեցաւ :
 Բայց ասիկա այնքա՞ն մեծ ցաւ
 մըն է որ մարդս թմրեցնէ, երբ
 ամբողջ ազգի մը ցաւերը կան,
 որոնց ամոքման աշխատելով հայ
 մը, այնքան շուտ կրնայ մոռնալ
 իրենները : Ձգոյշ և հլու գիրք
 մը բռնելով շատերուն նպատակը,
 հա՞րկ է ըսել, անշուշտ թրքական
 շնորհները հայցելն է, օր մը
 վերսկսել կարենալու համար
 փոստրական մեղկ կեանքը : Ա-
 տիկա ի հարկ է հաշիւ մը և մտա-
 ծում մըն է, բայց հայու հաշիւ
 ըլլալէ աւելի՞ անձնասէրի գծուծ
 հաշիւ մըն է, որմէ յաւետ կը
 նողկայ ճշմարտագէտ վեհանձն
 նկարագիր մը : Գուք որ խելացի
 ըլլալու յաւակնութիւնը, արդա-
 րացի յաւակնութիւնը ունիք, ը-
 սելիք մը չունի՞ք ազգին, կար-
 ծիք մը չունի՞ք յայտնելու թե՞
 էք թէ գէ՞մ անցած դարձածին :
 Ոչինչ կերեւակայեմ աւելի նը-
 ւաստացուցիչ քան ձեր կատա-
 ռած դերը, շուարածի, չեզոքի
 դերը, այնքան անհամապատաս-
 խան մտաւորական բարձունք-
 ները համոզի մը, որ եթէ չու-
 զեր յաւետ կորսնցնել իր ճշմա-
 րիտ և կարեկցող հայու բարի
 համբաւը, պէտք է նուազ անձնա-
 սիրութեան և աւելի վեհանձնու-
 թեան գործնական ապացոյցներ
 տայ :

Բաւական մաշելուց յետոյ՝ աքսորեց
 Աքբա նրա ըմբոստ հոգին ճնշելու
 գիտաւորութեամբ : Սակայն ոչ աք-
 սորակածի տանջանքները, ոչ էլ
 հարաւային երկրի կիզող արեւը չը
 հալեցին նրա սրտի խորքում հաս-
 տատ արմատ զցած հայրենիքի
 սէրը :

Գրիգորի հոգին ու սիրտը առողջ
 մնացին և անփոփոխ : Բայց, այն
 մեծ հոգին և սիրտը կրող մարմինը
 քայքայվեց :

Անհուն տարածութեամբ և երկար
 ու ձիգ տարիներով իրարից բաժան-
 ված, առանց միմիանց վրա մի
 լուր առնելու մնալուց յետոյ՝ յան-
 կարծ անցեալ տարի նրանից նամակ
 ստացայ : Ուրախութեան չափ չը
 կար : Ինչ յիշողութիւնները վերա-
 կինդանացան և աչքիս առաջ կանդ-
 նեց 1890 թւականի Գրիգորը : մի-
 ջաճասակ, նուրբ կազմվածքով, կո-
 լով գլխով և լայն ճակատով զեռա-
 փթիթ հայ երիտասարդը, որի կար-
 ձես վրձինով գծած, սեւ յոնքերի
 տակ զետեղված սեւ ու խոշոր աչ-
 քերը մերթ փայլում էին մեղմիկ
 ցուրով, մերթ կրակի պէս վառվում :
 Կրկին ականջս ընկաւ միշտ անուշ
 ձայնը, որը միայն զօգո՞ն վայրկեան-
 ներում մի քիչ կոշտանում էր : Գրի-
 գորը բերեցի պէս անբիծ հոգի և
 սիրտ ունէր : Նա իր մաքուր նկա-
 րագրով մի բացառիկ տիպ էր՝ այն
 ժամանակվայ տաճկահայ երիտասար-
 ղութեան մէջ և մինչևեւ այսօր երե-
 ւան եկած աղնիւ երիտասարդների
 մէջ առաջին տեղերից մէկը կարող
 էր բռնել :

Որչափ վառ կերպով յիշում եմ
 այն բոպէն՝ երբ 90 թւականին Պոլ-
 սում փորձում էինք նոր հնարված
 հրազէնը : Թէ ի՞նչ ոգեւորութեամբ
 փայեցին Գրիգորի հրաշալի աչքերը,
 թէ վրէժինդութեան ի՞նչ փոթո-
 թիկ բարձրացաւ այն անտակ ծովի
 նման ու շարունակ խաղաղ աչքե-
 րում, երբ Գրիգորը զգաց թէ այդ
 հրազէնով կարելի կը լինէր շատ
 թշնամի ոչնչացնել, նկարագրել չեմ
 կարող . . .

Ապա դատարանը՝ ուր գալիս էր
 հիւանդ և զօգոյն Գրիգորը, բարակ
 և ցամաքած շրթունքները սեղմած՝
 կանգնում թուրք դատաւորների ա-
 ռաջ՝ և իբր հայկական վրէժի մարմ-
 նացած ու յամառ ոգի, իր ատելու-
 թեամբ և արհամարանքով լի աչ-
 քերը սեւեռում դատաւորների աչ-
 քերին : Այդ աչքերում թուրքերը
 կարգում էին :

— Ինչ կուզէք արէ՞ք : մենք պէտք
 է կուենք, մեր վրէժը լուծենք : Ձեմ
 ընկճվի ես, ձեր ընկճվի և իմ տան-
 ջված եղբայրները, մինչևեւ մենք մեր

նպատակին չը հասնենք :

Այդ միջոցներում Գրիգորը նմա-
 նում էր միջնադարեան ֆանատիկ
 հաւատացեալ հերոսներին : Այդպէս
 անընկճելի, հաւատացեալ և մաքուր
 յեղափոխական միաց նա թէ բան-
 տում, թէ՛ աքսորում թէ՛ ազատե-
 լուց յետոյ, մի խօսքով մինչևեւ վեր-
 ջին շունչը :

Ահա թէ ինչ էր գրում Գրիգորը
 անցեալ և այս տարի ինձ ուղղած
 նամակներում :

Թանկագին և անմոռալի ընկիւր

«Հայը անբարոյականացած էր
 թրքական անբարոյական ընկիւր
 տակ :

Ամենաճարտար և հանճարեղ վի-
 րաբոյժ մը, փոստափ ևն թարգման
 հիւանդին անխուսափելի մահուան ճի-
 րաններէն կարենալ ազատելու հա-
 մար, ներքին փտած և հիւանդ մա-
 սերը կտրատելէ ու մաքրելէ զատ ու-
 թիշ հնար չունի. ուստի հայ յեղա-
 փոխականը, հայը բարձրացնելու
 համար ուրիշ միջոց չունէր, բայց
 եթէ ամենէն ակամայ միջոցը՝ յե-
 ղափոխութիւնը, որպէս զի հայը ար-
 ժանաւոր կերպով ապրելու իրաւուն-
 քը ստանայ :

«Մարդկութիւնը իրաւունք չունի
 անարժան տկարին պաշտպանել, այլ
 արժանաւոր և ընդունակ տկարնե-
 րին միայն, պէտք է այլ ևս հայը
 յեղափոխութիւնը իրեն համար մի
 պահանջ ընդունի և յեղափոխակա-
 նին իրեն միակ բարեկամը :

«Չը նայած որ ֆիզիքական թոյլ
 չը տար, որ կարենամ մի կարեւոր
 ծառայութիւն մատուցանել յեղափո-
 խական գործին, այսուամենայնիւ
 չը պիտի դադրիմ և որչափ կարելի
 է պիտի ջանամ, որ բոլորովին ան-
 պէտք և անօգուտ կեանք մը չունե-
 նամ» :

Մի ուրիշ նամակում Գրիգորը ա-
 սում է .

«Ամբողջ հայութեան մէջ այսօր
 յառաջացած է այնպիսի զօրեղ և
 բուն վրէժխնդրութեան ոգի, որ
 այլևս ոչ թէ չէ կարող լուր, այլ
 նաև անկարելի է զայն լռեցնելը,
 ուրեմն այստեղ յեղափոխական ար-
 ղէն մասամբ իր նպատակին հասել է :
 Միայն պէտք է ժամանակն ու նրա
 պահանջները ճիշդ ու լաւ կերպով
 ըմբռնենք և գործին շարունակու-
 թիւնը սկսինք ուղիղ այն կէտէն,
 ուր որ հասցրած և թողած էինք ե-
 րեկ : Մեր մէջ զեռ կան այնպիսի
 մտածողներ, որոնց մտքերը չեն կա-
 մապատասխաներ ժամանակի պա-
 հանջներուն : զօքախտաբար փամա-
 նակը մեզնից շատ յառաջացած է :

ՕՐԸ ՕՐԻՆ

ԳՐԻԳՈՐ ԳԸԸՃԵԱՆ

Ընկաւ և մի մաքուր յեղափոխա-
 կան զինուոր : Ընկաւ ոչ կուրի դաշ-
 տում, ոչ թշնամու սրից կամ գնտա-
 կից, այլ մահճի մէջ, ծանր հիւան-
 դութեան ճիւղներում խեղդվելով
 և շնկատուր լինելով :

Գրիգոս չէ շարժվում, շատ գծուար
 է գրել մի անկեղծ, անձնէր հայ-
 րենասէր և աղնիւ մարդ ընկերով
 մահուան մասին, որը զեռ երեկ կեն-
 դանի էր և յոյս ունէր նրա կարօ-
 տալի երեսը տեսնել . . .

Ութ տարի էր ինչ բաժանված
 էինք իրարից, տաճկական բռնա-
 պետը խեղճ Գրիգորին բանտերում

փոխանակ շտապելու եւ անոր ետեւէն հասնելու, ընդհակառակը կը դանդաղինք» :

Երորդ եւ վերջին նամակում գրում է այս տողերը, որտեղից կարելի է եզրակացնել որ նա մահը իրանից հետո էր կարծում :

«Այն կոիւր զոր կը մղէք ձեր միջավայրում խաւարի եւ խաւարածիտների զէմ՝ նոյնը կընեն ամէն սեղ ձեր համախոհ բոլոր ընկերները : Թէպէտեւ մեր ուժերը չեն բաւեր որովհետեւ մեր ուժերն ալ առողջ եւ զօրեղ չեն, այլ դեռ հիւանդագին : Բայց յարատեւ կոիւր թէ մեզ պիտի զօրացնէ եւ թէ ուրիշ հիւանդներին դարմանէ ու առողջացնէ : Ժամանակը միշտ մեզի աջակից է, ուստի վստահ մեր ուշ կամ կանուխ յաղթանակին, պէտք է շարունակենք մեր կոիւր եւ գործքերը աւելի հաստատ ու լուրջ հիմանց վրայ :

«Միւրիւն, անշուշտ պիտի աշխատեք ընդհանուր ժողովոյն մէջ յառաջացնել զօրեղ ձայներ, լուրջ եւ դրական ուղղութիւն մը բռնելու համար :

«Հիմա աւելի լաւ կը ճանչնաք ժողովուրդը եւ անոր պահանջները, ուստի անոր համեմատ գզեցողներ ձեւել եւ շինել պէտք է» :

Երբէք չէի կարող գուշակել որ Գրիգորի ամենավերջին տողերը այսպէս շուտով իբր մի սուրբ կտակ կը մնան :

ԸՆԿԵՐ

ՀԱՅՐԵՆԻՒԹԻՒՆԻ ՅԵՇԱՍԱԿՆԵՐ

—(—

Շէյխ Մէհմէտին տունը, որ Խիզանի ընդարձակ դաշտի ամենագեղեցիկ մասի վրայ շինուած է, երկյարկանի ընդարձակ շէնք մըն է, ամբողջ քարերը սրբատաշ, Խիզանի մօտակայ աւերակ

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

ԱԶԳԱՅՆՈՒԹԵԱՆ ՍԿՉՔՈՒՆԲԻ ԵՐԱՍՏՈՒՆԻՒԹԻՒՆԸ

Համախմբային պաշտպանութեան այս երկրորդ շրջանի ընդարձակութիւնը իւր ծայրագնութեան է հասցրել յունական եւ հռովմէական քաղաքակրթութիւնը, որ իբրեւ ընդհանուր ամբողջութիւն ճանաչում էր միայն «սիթէ» (քաղաք), որ դարձեալ շատ հեռի է ներկայումս հասկացած ազգայնութեան գաղափարից :

Ազգայնութեան իսկական գաղափարը յառաջացած է 15-16 րորդ դարում, երբ զանազան օտարազգիներ իրարարու հետ միացած ժողովներ էին կազմում կրօնական խնդիրների առթիւ :

Ազգայնութեան գաղափարը բուն եւ որոշ կերպով սկսեց երբեան զայլ ֆրանսիական Մեծ Յեղափոխութիւնից յետոյ, եւ այս անգամ բոլորովին տարբեր ծաւալով եւ տարբեր ըմբռնումով :

Ազգ ասելով այժմ սկսեցին հասկանալ մի ընդարձակ մարմին, որի մէջ կարող էին մտնել զանազան այլասեռ տարրեր էլ, որոնք պէս պէս պայմաններու

քաղքի Մայր եկեղեցիի եւ ուրիշ կարեւոր շէնքերի քարերէն հոն փոխադրուած . իր անական արդու զարդին չափ չը կայ, ահագին ճոխութիւն մը ու փարթամութիւն կը տիրէ հոն : Շէյխ ճէլալէտտին 79 թիւին մեռնելով, իրեն յաջորդած էր իր փոքր եղբայր Շէյխ Նուր Մէհմէտը, միանգամայն Շէյխ ճէլալէտտինի 7 կնիկներին երեքը՝ որ նշանաւոր գեղուհիներ էին, կնուխուան առած էր : Մէհմէտի արդար . . . օրէնքով, միւս չորս կիները իրենց բախտին ձգուած էին : Գրամական ահագին հարստութենէն զատ ունէր նաեւ հողային մեծ հարստութիւն, երեսուն հայ գիւղի հողեր ու պատմական հին քաղքի մը սահմանները գրասելով իւրացուցած էր : Մինչեւ վերջին տարիները այդ թէքքիէն բաւական հեռու, Խիզանի աւերակ քաղքի արեւելակողմը, բարեբեր դաշտի մէջ Պէթամի անուն հայ գիւղի մէջը քանի մը տնուր հայեր կան եղբր, բայց Շէյխ ճէլալէտտին իր գաղանութեամբ անոնք ալ վտարեր, ու այսօր այդ ամբողջ երկրին տէր են իր յաջորդները : (*) Միմիայն քառա-

(*) Այժմ Շէյխ Նուր Մէհմէտն ալ իր հօր քով գնացած, Շէյխութեան այդ ժառանգական աթոռին վրայ բազմած է Շէյխ ճէլալէտտինի մեծ որդին, Շէյխ Սայիտ . որ իր հօրմէն աւելի վատ ու մոլեռանդ լինելով՝ Հայաստանի կոտորածին աննկարագրելի նախծիրներ գործած է Խիզանի, կարկառի, կեցանի, Տատկոյ ու մինչեւ իսկ մօտիկ օրերս Խուլթկայ մէջ :

ներքոյ կարող էին նկատուիլ իբրեւ անանջատ մասն մի մեծ համացեղ մամնի :

Այլասեռ տարրերի միացմամբ ամբողջութիւն կազմելու երեւոյթը բոլորովին նոր էր քաղաքակրթութեան մէջ թէեւ Աղէքսանդր Մեծի եւ հռովմէական կայսրութիւններն էլ շատ այլասեռ տարրեր էին բովանդակում իրենց մէջ, բայց եւ այնպէս ներանք երբեք չկարողացան հասնիլ գաղափարական համացեղ (օմօթէն) ազգայնութեան սկզբունքին, ինչպէս հասկացում է մեր օրերում :

Ազգայնութեան սկզբունքը այժմ երկու որոշ բանակի է բաժանուած . մին՝ Գերմանական, իսկ միւսն՝ Ֆրանսիական : Եւ որովհետեւ այդ սկզբունքը իւր մէջ բովանդակում է ո՛չ միայն կենդանի ազգերի գոյութեան յենակէտերը, այլեւ նրանց արտաքին քաղաքականութեան գլխաւոր ուղեգիծը կազմում, ուստի խնդրի հետ ի մօտոյ ծանօթանալու եւ որոշ եղբակացութեան յանգելու համար, նախ պէտք է աչքէ անցունել իւրաքանչիւր սկզբունքի պաշտպանների թէօրիան :

տուն հատէն աւելի խաղաղի ընդարձակ այգիներ ունէր, որոնք ահագին պտուղ կարտագրէին, 30էն աւելի շրջագոյներ ու ազորիքներ, 5—6,000 հատ ոչխար, 150—200 ջորի, 100էն աւելի ձի ու զեռ ուրիշ շատ մը շարժական ու անշարժ հարստութիւն ունէր, ու այս ամենուն համար մէկ ստակ կառավարական տուրք չէր վճարեր : Իբր ոստանիկ տէր Խիզանի՝ կը թագաւորէ արարական մոլեռանդութեամբ մեր հայրենի երկրի պատմական այդ մէկ դաւառին մէջը : Իր բարոյական ազդեցութիւնն շատ մեծ է սօքէս ու բարբարոս քիւրդերի վրայ, ամէն բերան անոր անունով կերպնու, շատ մը մեծ վէճերու մէջ Շէյխը հզօր հեղինակութիւն ունի :

Շէյխի վճիռը անդառնալի է նոյն իսկ քրդական ընտանեկան ու ներքին կեանքի ու յարաբերական խնդիրների մէջ : 100էն աւելի մարդիկ ամէն տարի՝ ձրիաբար կաշխատին իր դուռը, իրենց հոգիների փրկութեան ու «Մէհմէտի դարախոյն» արժանանալու համար : Իսկ ամէն ասն հաւատացեալների կողմէ բերուած նուէրների ու մատաղների թիւը չը կայ . մէկ խօսքով, երկրորդ Յուր մըն է Շէյխութեան այս անունը հոս, զոր ո՛չ Աստուած կը փորձէ եւ ո՛չ սատանան . սանձարձակ կը յառաջէ նա իր գնացքին մէջը :

ՊԵՏ

(Շարունակելի)

—(—

Բ.

Գերմանական թէօրիան ազգայնութեան սկզբունք ընդունում է հայրենիքի միութիւնը, համացեղութիւնը, լեզուն, ընդհանուր սովորութիւնները, պատմական անցեալը եւ այլն :

Հետեւաբար երբ մի անհատ օժտուած է այդ յատկութիւններով, նա պարտաւոր է, նոյն իսկ կաւաւայ, մասն կազմել, միանալ այն ամբողջութեան, որ այդ հիմունքների վերան է դրած իւր զատ, ուրոյն գոյութիւնը՝ ընդհանուր մարդկութեան մէջ : — Ազգայնութեան սկզբունքի այդ տեսութիւնն են ընդունած նաեւ ռուս կառավարութիւնը եւ ռուս հրապարակախօսները :

Եւ այդ թէօրիան, իբրեւ արտագրութիւն գերմանական մտքի, ռուս եւ գերման կառավարութեանց արտաքին քաղաքականութեան ուղեգիծն է եղած՝ աւելի քան մի դար :

Ֆրանսիական թէօրիայի վերայ խօսելէն առաջ, քննենք գերմանականը :

Ա. «Ազգայնութեան առաջին յատկանիշն է հայրենիքի միութիւնը, երկրի ընդհանրութեան պատկանելիլը» :

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

Կ. Պոլիս, 12 Օգոստոս

Վարագոյրը վերաբացուեցաւ բեմին վրայ հանելով անգամ մըն ալ այն ամօթալի զաւեշար որուն Գարակէօզեան կտակ անունը կուտան : Յայտնի է թէ հանրային կարծիքը սաստիկ գրգռուած, նոյն իսկ սկսած էր նողկալ Գարակէօզեաններու անամօթութենէն . այնպէս որ ամենքը մէկ գոչ ունէին «ամբողջ կամ ոչինչ» . նոյն եզրակացութեան կը յանգէին նաեւ գրէթէ բոլոր հայ փաստաբաններու յայտնած կարծիքները :

Այս միջոցին ժառանգորդները միշտ կը ջանային անշարժ ստացուածքներու մեծ մասը կամաց կամաց իրենց անուններուն գարձնել, ինչ որ ապագային անյաղթելի դժուարութիւններ պիտի յարուցանէր ազգին գլխուն : Այս պատճառով դատավարութեան կուսակիցները շատցած էին նոյն իսկ ժողովներու մէջ, ինչ որ լուրջ մտահոգութիւն սկսաւ պատճառել Գարակէօզեաններուն : Այս վտանգին առաջը առնելու համար, վերջին օրերս ժառանգորդները յայտնած են թէ վարչութեան որոշումը անփոփոխ կրնազուրկ ինչ որ նոր խարէութիւն մըն է, որովհետեւ Գրիգոր երբեք 20 000 ոսկին տալու յանձնառու չպիտի ըլլայ, այլ միայն անհուն պայմանաժամով վճարելի մուրհակներով պիտի մեծարէ ազգը : Խնդրոյն վերջնական որոշումը թողուած է նախ ժողովի մօտալուտ նիստին :

Չաւեշարն ալ աւելի ամօթալի կողմն է Պատրիարքարանի ժողովներուն մէջ երկու անհատներու ներկայութիւնը . մէկը Տիգրան Տէր Ներսէսեան եւ միւսը աւագակապե-

Որովհետեւ հայրենիք բառը բառացի կերպով նշանակում է «հայրենի երկիր», ուստի ինչ աւելի մեծ կապ, քան հայրենի երկրի պատկանելիլը այն ընդհանրութեան, որոնք բոլորն էլ ծնուած, յառաջ են եկած այդ իսկ երկրի մէջ : Երկրի հանրութիւնը նիւթակտ մի մեծ կապ է, որպէս զի իւր մէջ բնակած նոյնանման տարրերը ընդհանուր հանգոյցներով շաղկապուելով՝ մի զանգուած, մի մարմին եւ մի ամբողջութիւն կազմեն : Եւ որպէս զի այդ միութիւնը հաստատ հիմունքների վերայ դրուի, գերմանական թէօրիան պնդում է, որ այդ բանի համար հարկաւոր է ունենալ եւ «աշխարհագրական միութիւն», որ մի մեծ երաշխաւորութիւն է «համացեղութեան» (օմօթէնէիթէ), հետեւաբար եւ ոյժի միութեան : Մի հայրենիք, որքան որ աւելի լաւ եւ որոշ բնական սահմաններ ունենայ, այնքան էլ նրա մէջ ամփոփուած ժողովուրդը աւելի շատ համանման գծեր կուենենայ :

Ս. ՍԱՊԱՆԳՆԻԿԱՆ

(Շարունակելի)

ար Առաջինը շատ մտախի ազգական Պատրիարքին խափեռ համար րնդունում գաբու քեհեախի կը պահէ միանգամայն Գաղ. ժողովի անդամակցութիւնը, այսպէսով թէ համարատու եւ թէ համարատու հանդիսանալով, ինչ որ բոլորովին ներհակ է սահմանադրական սկզբունքներուն:

Նիւ-Եորք, 9 Օգոստոս

Ամերիկայի հայ գաղթականութեան մէջ թուրք-Ամերիկեան մտաւայ պատերազմի մը ստարածանութիւնը կը շրջի: Պատերազմին պատճառով պիտի ըլլայ Մ. Նահանգաց 120,000 տուրք պահանջը վճարելու մերժումը Սուլթանական կառավարութեան կողմէ, եւ պիտի վերջանայ անպատճառ Հայաստանի անկախութեամբ:

Այդ տարածանութիւնը ա'լ աւելի իրականութեան մտեցաւ, երբ անցեալ շաբթու ժողովրդական քարոզիչ տղթ. Պէյթս, բացթողնելու 15,000 հոգիէ բաղկացած ժողովի մը մէջ, յայտարարեց թէ «այ ասկէջ վերջ աշխարհիս ոստիկանները Անգլիա եւ Մ. Նահանգները պիտի ըլլան. ուրտեղ որ մարդկութեան իրաւունքները ոտնակոխ կըլլան բիրտ ուժի կողմէն, հոն պիտի վազեն ձօն Պուլ եւ Բնքըլ Սամ պատժելու համար: Ընթացողը եւ պաշտպանելու սկզբը: Ներկայ պատերազմը կը մղենք յանուն մարդկութեան: Երբոր աշխարհս տեսաւ թէ Ասիական լեռներուն վրայէն 8,000,000 հայը երեք միլիոնի վերածուեցաւ, կնցիտ (stop) աղաղակեց, բայց զօրութիւններուն հասարակչութիւնը պէտք էր պահել, ու Սուլթանը չը կնցար: Յետոյ աղաղակ մը եկաւ միայն 80 միլիոն հեռուէն գէպի Բիուէսթ, «օգնութեան հասէք», հասանք օգնութեան...: Մենք պատերազմ չենք ուզեր, բայց հալածողին պէտք է ըսենք «զարդէ», եթէ Սուլթանը նորէն կը հալածէ հայերը, լաւ, Օրիկոնը, նաւապետ Յիլիփի հրամանատարութեամբ, եւ թէքաստը ու Տիւրքի զրկեցէք Կ. Պոլիս, եւ մենք պիտի զաղրեցնենք Սուլթանը»:

Այսօրինակ ճառերէ ու լրագրական յօդուածներէ վերջն էր որ Հ. Էլիւհեան այնքան առաջ գնաց որ Տիգրիսի մէջ «կարգը ձերն է, Վեհ. Տէր» առաջնորդող մը հրատարակեց, որով այն կարծիքը կը յայտնէր թէ ներկայ պատերազմէն անմիջապէս վերջ, յաղթական Բնքըլ Սամը Սուլթանին պիտի պահանջէ քանի մը սուլար առնելիքը ու եթէ մերժողական պատասխան ստանայ, Ոսկեղջիւրին վրայ այն պիտի ընեն Ամերիկեան նաւակները, ինչ որ ըրին Մանիլայի առջեւ:

Յոռետեսութիւնը, գէթ ազգային վերածնութեան գործին մէջ, շլատիչ ոգի մըն է, բայց կը ներքեք որ ըսեմ թէ ներքեք Անգլիոյ մէջ կլատթոնի պատմական համարաւոր ճառը լսեցի, տարիներ առաջ, մարդասպաններու մասին, ժողովարարէն մեծ յոյսերով զուրս եկայ, անխախտ հաւատալով

թէ մէկ ամիսէն Մեծ Ծերունին կողմէ այցելելու ազատուած Հայաստանը: Ան ինչ ճառ էր, եւ ո՞վ էր խօսողը... օհօ, խօսողն գնաց գերիզմանի անդունդներուն մէջ, մինչդեռ ոճրագործները ամէն ատենէ աւելի երջանիկ ըլլալ կը թուին: Այդ օրէն ի վեր ես շատ հաւատք չեմ ընծայիր հայոց մասին խօսուած համակրական ճառերուն եւ գրուածքներուն:

Թ. 2.

Ռուսչոբ, 13 Օգոստոս

Միտիարական ոչինչ ունիմ գրելիք ձեզ այն որբերուն մասին զորս կրթելու պատրուակով, երկու ամիս առաջ Վասնաշէն հոս բերած էր ըզոքական միտիոնար Պ. Վանկիմայն: Վասնաշէնի գասեր անուան տակ պարզ բեռնակրութեամբ կը զբաղին որբերը, աւազ եւ ջուր կրելով միտիոնարին չինել տուած քանի մը սենեակներուն կառուցման: Արդարեւ այս գթութեան հրեշտակին բարեբառութեան ըսելիք չկայ: Այս ծանր աշխատանքէ ետքը խեղճ որբերը խոնաւ անկիւն մը ունին ուր կը քնանան յարգի դեղերու վրայ, շատ անգամ հացիտեղ... Ծծծ ուտելէ ետքը: Այդ տարաբախտ աղաքներէն մէկը նոյն իսկ իմ ներկայութեանս Աղքատախնամին անդամներէն մէկուն կը պատմէր թէ ինչպէս Միտիոնարը շարաշար կերպով կը ծծէ եղեր գետառի աղիկ մը, ապահով ըլլալով թէ ոչ ոք չէր շահագրգռէր անոր լքուած վիճակին. եւ թէ ինչպէս ինք, սուկալով այդ ծծէնէն թողած, հեռացած էր այդ... խնամքի վայրէն:

Վերոյիշեալ միտիոնարը իրեն գործակից ունի հայուէի մը Օր. Վերթին, որ աղաքը կը յորգորէ, իրենց մեղքերու քառութեան համար, պարզապէս պատուելիին ներողամտութեան զիմել, փոխանակ հաղորդութիւն առնելու:

ՀԱՅԿԱԿ

Սիլիստրի, 13 Օգոստոս

Վառնացիներուն բարի նախանձը շարժելու համար ուրախ եմ հաղորդելու թէ մեր րնթիւրցարանը հեռի է իր վառնաի քրոջ տիւրը վիճակին մասնուած ըլլալէ:

Վարչութիւնը խցի մտօք կը կատարէ իր պարտականութիւնը եւ ջանք չի նախար, որպէս զի օրէ օր զարգանայ ընթերցարանը, ուր բացի հայերէն լրագրիցէ՝ օտար թերթեր ալ կը ստացուին: Այժմ ընթերցարանին մէջ լսարան մըն ալ հաստատուելու ծրարելը կը մշակուի, որով քիչ ատենէն ամէն օք ազատ պիտի ըլլայ իր ազգօգուտ գաղափարները պարզելու հասարակութեան առջեւ: Մէկ խօսքով, ընթերցարանը տեղացի երիտասարդութեան համար, համերաշխութեան եւ սիրոյ կապ մըն է: Ամենէն միտիարական կէտը այն է որ ամէն բաժանորդ իր բաժնեգինը կանոնադրապէս կը վճարէ, ինչ որ անշուշտ հրաշք մըն է մեր բարեբերու մէջ:

ՎԱՂԻՆԱԿ

Վիդնիկոսոբ, 10 Օգոստոս

Մեր պաշտելի բնավայրէն հեռու, այս օտար երկրին մէջ հայրենիքի սէրը վառ պահելու համար մեր մատաղ սրտերուն մէջ, հայ պատանիներս Հայկական դրագարան մը հաստատեցինք այս տեղ. եւ որքան հնար է ձօնացնելով զայն մեր հայրենաշունչ հեղինակներու երկերով, նուրբիցիք մեր յաւէտ սրբի ազգին անուան: Մեր գրագարանի հա-

տոյթի զլխաւոր աղբիւրն եղած է քոչերու եւ քաղք-քոսքալներու վաճառումը: Ուստի պիտի խնդրեմ բոլոր այն ազգայիններէն որ Վիդնիկոսոբի ազգ. գրագարանը հետզհետէ զարգացած գրութեան մէջ տեսնել կըղձան, հաճին գլխաւորաբար պուրկարական եւ ուսմանական գործածուած բուրբ եւ քաղքեր զրկել մեզ, ապահով ըլլալով թէ այդ ջնջին զոհողութիւնով մեծապէս նպաստած պիտի ըլլան մեր փոքր այլ ազգաշէն գործին: Կը խոստանամ մօտերս աւելի մանրամասնօրէն գրել մեր գրագարանի մասին:

Աւանսիւ-Մարգապետեան Հասցէ Լազար Մանուկեան Վիդնիկոսոբ (Վիւրթիմպէրկ)

ՔՐՈՆԻԿ

—(—)

Պատուելիներու խումբ մը կը փորձէր Պոլսոյ կեդրոնական վարժարանը վերածել վարժապետանոցի մը, վասն զի անոր գոյութիւնը իրենց հացին վերջ մը տալ կը սպասուար: Հիմակ Գաղաքական ժողովը տեսակ մը համաձայնութեան գալ կը փորձէ Ուսում. խորհուրդին հետ. եւ որոշած է՝ նոյնը պահելով կեդրոնականին անունը եւ ծրագիրը, աւելցնել հոն մասնաւոր գասնթացք մը ուսուցչութեան համար:

—Խաղաղի Գալֆայեան Որբանոցին հսկողութիւնը՝ հաստատութեան կանոնագրին համեմատ Ս. Պատրիարքին վերաբերելով, Ն. Սրբազնութիւնը իր կողմէն Ստեփան փաշայի յանձնած է գործադրել այն ամէն միջոցները, որոնցով կարելի է բարեկարգ վիճակի մէջ պահել այս հաստատութիւնը:

—Ազգ. հիւանդանոցի նորընտիր հոգաբարձութիւնը անդրաւնիկ յայտարարութիւնով մը կը հրաւիրէ ազգայինները, որպէս զի իրենց նիւթական եւ բարոյական աջակցութիւնը չի զլանան ազգին աս միակ հաստատութեան:

Անշուշտ միայն տաճկահայերուն վրայ չի ծանրանար այդ պարտականութիւնը, արտասահմանի հայերն ալ պէտք չէ մոռնան Ս. Փրկիչը:

—Աթէնքի եւ Բերէի ազգայինները խնդրած են Ս. Պատրիարքէն, որպէս զի քահանայ մը զրկէ իրենց հոգեւոր միտիարութեանէ զուր չի մնալու համար: Յանձնարարուել է փոխանորդարանին որ հարկ եղած կարգադրութիւնն ընէ:

—Տիրապէքի լըճէ գաւառին Հորում գիւղի ազգայինները հանրագիր մը զընած են Պատրիարքարան տեղեկացնելով թէ՝ գիւղին ասորի քահանան վարպետութիւնով յաջողեք է ձեռք անցունել հայ եկեղեցին եւ զերզմանատունը, քանզի զու աւնոնց մէջ գասնուած բոլոր հին յիշատակարանները: Բայց հոս

չեն վերջանար աս ասորի քահանային շահատակութիւնները. թեւեւը երկնցուցած ուրիշ գերեզմանատուններու եւ կալուածներու ալ տէր ըլլալ կուզէ:

Տիրապէքի բոլորները բողոքեք են տիղական կառավարութեան ալ:

Ասորական այս աւազակութեան լուրը կանխաւ ալ տուած էինք. ըսել է դեռ կը շարունակուին անոնք: Կառավարութեանէն ալ բան մը չենք սպասեր, քանի որ ինքն է տուած յալիշտակութեան այս դասերը:

—Պ. Սահակ Գարագաշեան Կ. Պոլսեցի հայ երիտասարդ մը, Վենետիկի Գեղարուեստից կաճառին ճարտարապետութեան վերջին քննութիւններուն մէջ առաջին մրցանակը, շքադրամով մը շահեք է: Թոմասօ Փորոնիի հաստատած մրցանակը, ճարտարապետական գծագրութեան յաջողակ աշակերտին համար, նոյնպէս Պ. Գարագաշեանին տրուել է: Այդ աւագեմիային մէջ, հաղուագիւտ է որ օտար մը այսչափ փայլուն քննութիւններ տուած եւ այսչափ բարձր մրցանակներու արժանացած ըլլայ: Երիտասարդ ճարտարապետը մօտերս կը վերադառնայ Պոլիս Մեր շնորհաւորութիւնները:

—Տեղիս նախորդ Աղքատախնամի Ատենադպրին գէմ եղած ամբաստանութիւններն զեկուցուած են նաեւ Ուս. խորհուրդին, որ ու էէ տնօրէնութիւն ընելէ առաջ որոշեք է Վառնայի թաղ. խորհուրդէն տեղեկանալ ճշտութեանը:

Հոս ալ բողոքողները դիմած են թող. խորհուրդին որպէս զի անպարեն անկողմնակալ քննութիւն մը կատարելու հաղորդել Ուսում. խորհուրդին:

—Սեբաստիոյ Անապատի վանքին մէջ մօտերս պիտի հաստատուի որբանոց մը, սրուն համար պատրիարքարանը ամսական 15 ոսկի սահմանած է:

—Վանէն կը գրեն թէ այս տարի հունձքերը շատ աւելի աւատ են նախորդ տարիներէն, եւ ամէն գլուղացի իրեն բաւելու չափ ապրուստ կրնայ հայթայթել: Գաղթականներն ալ մեծ մասով իրենց տեղերը վերադարձեք են:

—Էջմիածնէն մեզ հաղորդում են կը գրէ Նոր-Դար, որ այժմ Մէսրոպ վարդ. Տէր Մովսիսեանը պատրաստել է Ս. Էջմիածնի մաստենադարանի գրչագիրների ցուցակը, որոնց թիւն է 3,350 (նոյնքան կազմի մէջ ամփոփուած): Հայր սուրբը այս աշխատութեան ձեռնարկել էր 1893ին:

Ահա երես ճերմկցնող Էջմիածնցի վարդապետ մը:

—Գէորգեան ճեմարանի 1897ի շրջանաւարտներէն մէկն ալ, Պ. Յակոբ Թօփիւան կազմեք է Սե-

ւանի վանքի գրչագիրներուն ցանկը :

—Էջմիածնի ճեմարանի Բ. և Գ. լսարանի ուսանողներէն մօտ 10-12 հոգի առաջիկայ աշունին պիտի ընդունին հոգեւորականի սքեմը :

—Բայց էջմիածնէն եկած ամէն լուր վարդապոյն չէ . քիչ մըն ալ մտիկ ընենք Մշակին ուրուն կը գրեն էջմիածնէն .

«Հաստատ աղբիւրներէ տեղեկացանք, որ վանական կառավարութեան նախագահ Սուքիաս արքեպիսկոպոսը, օգտվելով մեր ժողովրդի նեղ դրութիւնից, փողով շուր է ծախում գիւղացիներին, ստանալով ամէն մի խալվար (հացահատի չափ մը) տեղի համար 10 բուլլի» :

Ահա էջմիածնցի եպիսկոպոս մըն ալ որ անոր վարկը կը կոտրէ միշտ :

—Կարս գտնուած կարնցի գաղթականները խումբ խումբ իրենց տեղերը կը վերադառնան :

—Պոլսէն քաշուած հեռագիր մը կը հաստատէ այն բռնութիւնները, որոնք գործուեցան վերջերս՝ հայոց վրայ, Բաղէշի Ախլաթ գաւառակին մէջ : Նոյնպէս Սասունի մօտ հայկական վանք մը կողոպտուեր է :

Բարենորոգումները կը շարունակուին (՝ .՝ .) :

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԴԵՊՔԵՐ

ՌՈՒՍԻԱ ԵՒ ԱՆԳԼԻԱ

Բէքինի ուսական դեսպան Պ. Բավլով արգարեւ ճամարիա փորձանք մը դարձած է Անգլիական շահերու դէմ Զինու մէջ : Խուլ կուր մըն է որ ամէն օր, ամէն վայրկեան կը մղուի բրիտանական ազդեցութեան դէմ : Այսպէս, ուր որ Անգլիա երկաթուղիի մենաշնորհ մը կամ ու է առաւելութիւն ձեռք բերելու կէտին հասնի, գործը կը վրիպի : Անգլիական թերթերը վերջին ծայր դժգոհ են Լորտ Սալզպրիթի թոյլ քաղաքականութենէն : Նոյն դժգոհութիւնները նաեւ Զինու մէջ հաստատուած անգլիացի վաճառականներուն կողմէն :

Անշուշտ անհնարին է որ այս գրութիւնը շարունակուի : Մայրաքոյն արեւելքի մէջ իրերը այն աստիճանին հասած են, որ ամէն վայրկեան պայթում մը կրնայ տեղի ունենալ : Իրաւ է թէ Ռուսիա բացէ ի բաց պատերազմ չփնտռեր, բայց միշտ շարաշար գործածելով Բէքինի դահլիճին մէջ իր վայելած ազդեցիկ դիրքը, կրնայ վերջ ի վերջոյ Անգլիան ծայրայեղութեան առաջնորդել :

Արդէն անգլիական դեսպանը ծանուցեր է որ եթէ Զինու կառավարութիւնը չհամակերպի անգլիական իրձեւուն, այս մերժումը իբր պատերազմական շար-

ժառիթ մը պիտի նկատէ : Այժմուր ծովակալը իր ամբողջ նաւաորմով ուժ կուտայ անգլիական պահանջումներուն :

ԳՐԱՏԱՂ ԵՒ ԹՈՒՆԻՔԻԱ

Գարատաղի մէջ մեծ փութով առաջ կը տարուի Չարէն նուիրուած զէնքերուն բաշխումը : Նոր զօրախումբեր կազմուելու վրայ են : Մօտեքս Անգլիկարի նաւամատոյցը կը սպասուի ռուսական շոգենաւ մը որ հրետանիներ պիտի բերէ : Որքան որ սահմանագլխի շփոթութիւնները մեղմացած կը թուին, և սակայն արիւնալից ընդհարումները անպակաս են : Գարատաղցի կը յուսան Պէրանի գաւառը գրաւել և այս նպատակով գործիչներ շրկուած են հոն, խուզումները միշտ վառ պահելու : Մօտեքս Պէրանի ժողովուրդին կողմէն յատուկ պատուիրակութիւն մը պիտի ներկայանայ Նիքոլա իշխանին, խնդրելու որ իրենց երկիրը Գարատաղի կցուի : Ահա մնայուն մութ կէտ մըն ալ Թուրքիոյ հորիզոնին վրայ : Վերջին ապստամբութիւնը թէեւ մինչեւ հիմա օգուտ մը չէ արտադրած Գարատաղի, բայց այս վերջինը երբեք չպիտի դադրի Ալպանիան գրաւելու փառասիրութիւնը տածելէ :

Մ. ՆԱՀԱՆԳՆԵՐԸ ԵՒ ՍՊԱՆԻԱ

Հաշտութեան դաշնագրին բանակցութիւններուն համար Բարիզ գումարուելիք դեսպանաժողովին, Ամերիկայի կողմէ պիտի մասնակցին հինգ հոգի, որոնք վերջնականապէս ընտրուած են : Գահլիճին անդամներէն մէկուն յայտարարութեան նայելով, Մաք Բինլի հետեւեալ հրահանգները տուած է որոնցմէ դուրս չպիտի կրնան ելնել պատուիրակները :

Ա. Մ. Նահանգները Լիւզօն կղզին պիտի պահեն : Բ. Արշիպեղագոսին մըս կղզիներուն մէջ, Սպանիան առեւտրական դիրութիւններ պէտք է ընծայէ Մ. Նահանգաց : Գ. կղզիներէն և ոչ մէկը չպիտի թողուի ուրիշ ու է օտար տէրութեան :

Ասոնցմէ զատ ամերիկեան կառավարութիւնը ամբողջ Արշիպեղագոսին մէջ Պետութեան և Եկեղեցւոյ խղովը կը պահանջէ :

—Քուպաի և Փիլիպպեաններու ապստամբները շատ յօժար չեն երեւար զինադադարը ընդունելու : Հակառակ ամերիկեան հրամանատարներու սպառնալից յայտարարութիւններով, ընդգրկմութիւնները կը շարունակուին, այնպէս որ նոյն իսկ Նիւ-Եորքի մամուլը սկսած է զանդատիլ Ամերիկայի պաշտպանելներուն դէմ : Նոյն դժգոհանքը կը տիրէ նաեւ Սպանիոյ մէջ, ուր կը գանգատին թէ ամերիկացիք անկարող եղած են զինադադարը յարգել տալ ապստամբներուն :

Ռիօս զօրավարը բնիկներէ բաղկացած վեց վաշտեր կազմած է, որոնք սահմանուած են արգիւլելու ու է յարձակում ապստամբներու կողմէն՝ Լիւզօն կղզիներու վրայ :

Ասկէց զատ, փոքր տորմիզ մը կազմակերպուած է, որ Վիտտյաս և Միլտանաս կղզիներուն վրայ պիտի հսկեն :

Ամերիկեան նոր զօրքեր Մանիլ հասան Մէրիթ զօրավարին օգնութեան :

ԽՆՈՒՆ ԼՈՒՐԵՐ

Քանէէն Սասնտարտի կը հեռագրեն թէ պաշարօգուքներու խումբ մը Ռէթիմօէն դուրս ելեր և զօրաւոր դիրք մը գրաւեր է կիրճերու մէջ, զինորական շրթայէն անդին, քաղաքէն երկու ժամ հառադուրութեամբ : Քրիստոնեայներու բազմաթիւ խումբեր փորձեր են հեռացնել զանոնք այն տեղերէն : Քրիստոնեայները շատ գրգռուած են :

—Յայտնի է թէ Վիլհէլմ Թուրքիա սյցելել է ետքը Եգիպտոս ալ պիտի երթայ : Կայսրը մերժած է Անգլիոյ հիւրը ըլլալ Եգիպտոսի մէջ, որպէս զի կերպով մը նուիրագործած չըլլայ Անգլիական գրաւումը և նորանոր սահմութիւններ չպատճառէ Ռուսիոյ, որ բացէ ի բաց կը պաշտպանէ Ֆրանսական պահանջումները Եգիպտական խնդրոյն մէջ :

—Եգիպտոսի Խտիւր ամառյա վերջերը իր եղբօր ընկերակցութեամբ Պօլիս պիտի այցելէ և տաննհինգ օրի չափ Սուլթանին հիւր պիտի ըլլայ :

—Մօտեքս թուրքօ-հելլենական դաշնակցութեան մը տարածայնութիւնը շրջեցաւ : Կ. Պոլսէ քաշուած հեռագիր մը կը հերքէ այս լուրը, յայտնելով միանգամայն թէ երկու երկիրներուն մէջ միայն իբր բարի դաշնակցութիւն պարտաւորուած փոփոք կայ :

—Թէ հրանէն «Թան» կը հեռագրեն թէ ամառյ 11ին Թուրքի մէջ ծանր խառնակութիւններ ծագեր և բազմաթիւ անձեր զոհ գացեր են : Շփոթութեանց պատճառ եղած է ազդեցիկ կրօնաւոր մը զոր ժողովուրդը արտաքսել կուզեր : Այդ արտաքսումը ընելու խոստումը տալով, կառավարութիւնը յաջողած է խաղաղութիւնը վերահաստատել :

—Սօփիայի մէջ վերջին օրերս «Առեւտրական գրամատուն» մը հաստատուած է անանուն ընկերութեան մը կողմէ որ 250,000 Ֆրանկ գրամագրուի ունի :

ՆԱՄՍԿԱՍՏՈՒՓ

Տ. Գ. Ս. Թրնովա. — Ստացանք զրամը Ա. Գ. ձեռքով : —Շարժումի բաժանորդագրուիլ փափաքողներէն կը խնդրուի որ իրենց հասցէն զրկած առեւնին, բաժնեգրին ալ զրկել չմոռնան : —) (—

ИЗВѢСТІЕ
Съгласно на писмото на г-на Н. Драгулевъ вѣстника ни послѣдния брой издава подѣ отговорности му.

ԾԱՆՈՒՑՈՒՄ

Կուզէ՞ք վաճառուան լաւ պաշտօնեայ մը . զիմացէք Շարժումի խմբագրութեան, որ ցոյց կուտայ հայ երիտասարդ մը որ ինք տարիէ ի վեր կառավարական պաշտօն կը վարէ և սովորակալութեան ճիւղին համար Վառնայի առեւտրական գրասենեկէն վկայուած է :

ՎԱՐԴՕ

ԵՐԿՈՒ ՍԷՐ

(ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ)
—) (—
(Գին 1 Ֆրանկ)

Մնացած սակաւաթիւ օրինակները կը ծախուին Վառնայի մէջ Շարժումի խմբագրատունը, Ֆիլիպէ՝ Տ. Անտօն Կոչի մօտ, Ռուսլուք՝ Հայկ Մալխեանի սրճարանը, Սօփիա՝ Տ. Մուշկ Արծրունիի քով : Մօտեքս մամուլին կը յանձնուին նոյն հեղինակին «Բռնութեան զոհերը» :

Ն. ՍԻՍԿԵԱՆ

Նկարիչ-Լուսանկարիչ

Պատիւ ունի ծանուցանել արգոյ հասարակութեան թէ Տօպրիլի մէջ լուսանկարչատուն մը հաստատուած է ուր բացի ամէն մեծութեամբ լուսանկարներէ, կը պատրաստէ նաեւ իւղաներկ և գարաքալէմ պատկերներ :

Այլ և ալ քաղաքներէ անոնք որ կը փափաքին իրենց իւղաներկ կամ քարաքալէմ պատկերը ունենալ, փափկութեամբ և ճշգրիտ նմանութեամբ զծուած, թող փութան զրկել իրենց լուսանկարը յիշեալ լուսանկարչատունը : Գիները յոյժ չափաւոր : 8—10

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

Ս. ՍԱՊԱՆ-ԳԻՒԼԵԱՆ

—) (—
ԵՒՐՈՊԱՅԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԴՐՈՒԹԻՒՆԸ ԲԵՐԼԻՆԻ ԴԱՇՆԱԳՐՈՒԹԻՒՆԻՑ ԾԵՏՈՅ
—) (—
Գին 1 Ֆրանկ

Կը վաճառուի Շարժումի խմբագրատունը :

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ, ՇԱՐժՈՒՄԻ

—) (—
Կը տպագրուին ամէն լեզուէ այցետոմս, հասցէտոմս, նամակազուլի, հարամեկան հրաւիրագիր, մահապղ, ինչպէս նաեւ պրօշիւններ :

Գիններն յոյժ գիւրամատչելի : Ուրիշ քաղաքներէ եկած յանձնարարութիւններ ճշգրութեամբ և փութով կը կատարուին :

«Շ Ա Ր Ժ Ո Ւ Մ»

Վառնայի մէջ կը վաճառուի Մուսալա, թահալի կէտիպէ՛՛յի քեան նի խանութը, և Ապտիւրրահմա մզկիթին գէմը հայկական գրատունը, Ա. Չարբանէլեանի քով :

Печанница „Взаимность“ Варна